ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արբաթ համայնք 4/26 Հեռ. (093) 90-98-99

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱՆԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ-ի հունվարի 14-ին Արբաթի երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ հանրային լսում,որը նախագահում էր համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Աննա Մարտիրոսյանը:

Մասնակցում էին ավագանու 6 անդամները՝ Արսեն Կարապետյանը, Հովհաննես Բոյմուշակյանը, Գագիկ Հայրապետյանը, Քյարամ Ալիյանը և Գուրգեն Փանոսյանը և Գարիկ Դոլմազյանը ,համայնքապետարանի աշխատակազմը, ամբուլատորիայի և երաժշտական դպրոցի աշխատակիցները,լսմանն ներկա էին նաև Արբաթ համայնքի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչական անձնակազմը և համայնքի մի շարք բնակիչներ:

*Լսեցին.*Արարատի մարզի Արբաթ համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյանի հաշվետվությունը՝ 2018թ-ի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ,2018թվականի բյուջեի կատարման և 2019թվականի բյուջեի նախագծի մասին:

Արձանագրվեց, որ

2018թ-ի 2-րդ կիսամյակի ընթացքում Արբաթ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

-Կանոնավոր կերպով կատարվել է աղբահանություն,որի ծախսերը կազմել են 1265.2հդ:
-Համայնքի երաժշտական դպրոցին տրամադրված կիսամյակային ծախսերը կազմել են 6000.0 հդ:
-Տրամադրվել են դրամական օգնություններ անապահով ընտանիքներին 300.0հդ արժեքով:
- Արբաթ համայնքի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոցին տրվել է դրամական օգնությու ն 200.0 դրամ, ճաշարանի ծախսերը հոգալու համար:
- Արբաթի <<ԲԱ>> ամբուլատորիային տրվել է 100.0հդ օգնություն ընթացիկ ծախսերը հոգալու համար:
- Ասֆալտապատվել է համայնքի գլխավոր,ասֆալտապատման ծախսերը կազմել են 18000.0 դրամ,

Փողոցների լուսավորության ապահովման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 250,0հդ էլ. էներգիայի վարձ:
-Կատարվելեն շաբաթօրյակներ,որոնց շրջանակներում մաքրվել է համայնքի այգին,երաժշտական դպրոցի տարածքը,համայնքի կենտրոնական ճանապարհը և միջնակարգ դպրոցի տարածքը:

ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ